463

1. Էլ ետ մի՛ նայիր, երբ դարձար արդեն
Յլու-հնազանդ ծառա Քրիստոսի,
Էլ ետ մի՛ նայիր, երբ տեսար արդեն
Անսահման սերը Միածին Գառի:

Դո՛ւ, որ լսեցիր ձայնը Յիսուսի,
Անկեղծ եմ ասում, էլ ետ մի՛ նայիր,
Ինչո՞ւ ետ նայել, երբ քո առջևում
Կենաց պսակն է արդեն երևում:

2. Էլ ետ մի՛ նայիր անառակ կյանքիդ,
Որ ապրել ես դու առանց Յիսուսի,
Էլ մի՛ հետևիր այն պիղծ մտքերին,
Որ դրդումներն են չար սատանայի:

Եվ ասպարեզում վազողի նման
Միշտ առա՛ջ անցիր, ով ի՛մ բարեկամ,
Անցած ճամփեքին հայացք մի՛ ձգիր,
Եվ Աստծո սուրբի խաչին միշտ նայի՛ր:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025